մոգերը Երուսաղէմ հասան կ'ներեւութանար։ Երբ անոնք լուր տուին Հերովդէսին իրենց գալուստը, եւ հրաժեշտ առնելով մեկնեցան, աստղը ցոյց կուտար իր անձը, բայց կը հասկցնէր թէ ընթացող աստղ մը չէ, այլ խօսուն և իմաստուն զօրութիւն մը։ Նաև ան իր գնացքին համեմատ չէր գնար, այլ երբ անոնք կ'երթային՝ կ'երթար, և երբ դադարէին կը կենար, և այսպէս ըստ պատշաճի ամէն բան կը կատարէր, ինչպէս «սիւն ամպոյն» որ կը նստէր և կ'ելլէր Իսրայէլի որդւոց պէտքին համաձայն։

Չորրորդ, մանուկը ցոյց տալու ժամանակ յայտնապէս կ'ուսանինք ոչ թէ աստղը ինքը վերէն ցոյց տուաւ մանկան տեղը, վասնզի հնար չէր անոնց համար այդ կերպով հասկնալ, այլ ինքը տեղւոյն վրայ կը կենար և ցոյց կուտար։ Եւ գիտէք ալ որ տեղը փոքր բան մըն էր խզի մը չափ որ հազիւ կրնար պարունակել փոքր մանուկ մը, ու աստղը չէր կրնար ցոյց տալ, վասնզի բարձրութիւնները այնքան հեռու են՝ որ բացէն կարելի չէր նշմարել փոքրիկ տեղը եւ ցոյց տալ անոնց՝ որ տեսնել կ'ուզէին։ Եթէ մէկը ուզէ այս պարագան լուսինէն սորվիլ՝ կը հասկնայ որ բոլոր աստղերէն պայծառագոյն է, եւ երկրի բոլոր բնակիչներուն որ այնչափ լայնութիւններու և երկայնութիւններու վրայ ցիրուցան տեղաւորուած են, իւրաքանչիւրին ալ մօտ կը թուի, և արդ ըսէ ուրեմն, աստղը ի՞նչպէս պիտի կրնար ցոյց տալ խուզն ու մանուկը, եթէ ոչ վար իջնելով՝ գալ կենալ մանուկին գլխուն վրայ։ Աւետարանիչը առակով մը կը հասկցնէ ըսելով. «Ահաւասիկ Աստղն առաջնորդէր նոցա, մինչև եկեալ եկաց ի վերայ տեղւոյն ուր էր մանուկն»։ Կը տեսնե՞ս որչափ յայտնի կերպով կը հասկցնէ թէ